Թ Ե Ս Տ 1

Ցուցումներ դիմորդների համար՝

Թեստը բաղկացած է 2 խումբ հարցերից:
A խմբի առաջադրանքների ճիշտ պատասխանը մեկն է:
B խմբի առաջադրանքների հնարավոր ճիշտ պատասխանները երեքն են:
B խմբի առաջադրանքների ճիշտ պատասխանների քանակը կարող է լինել մեկով պակաս՝ երկու ճիշտ պատասխան: Այս դեպքում դասակարգ մնացած վանդակում պետք է ավելացնել ,Օե թվանիշը: Գնահատվում են միայն լիարժեք պատասխանները:

Թեստի առաջադրանքները կատարելու համար դիմորդը կարող է հավաքել 0-ից 20 միավոր: Դրական են համարվում 8 – բարձր միավորները:

Խումբ	Առաջադրանք -ների քանակը	Միավորները	Հանրա□հանրային միավորներ
A	60	Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում՝ 0,25 միավոր	15 միավոր
B	10	Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում՝ 0,5 միավոր	5 միավոր
Ընդամենը	70 հարց		20 միավոր

Թեստում թույլատրվում է կատարել ուղղումներ: Թեստը լրացնելուց հետո բոլոր պատասխանները պետք է ընթեռնելի – առանց ուղղումների անցկացնել պատասխանների բլանկի վրա:

Ուշադրություն.
Թեստի – բլանկի պատասխանների անհամապատասխանության դեպքում՝ վերջնական □նահատականը որոշելիս, որպես հիմք ընդունվում են բլանկի պատասխանները:

A խմբի առաջադրանքներ

1. Ե՞րբ է Աքեմենյան տերությունը բաժանվել վարչական 20 մեծ շրջանների.
1) Ք.ա. 523թ. 3) Ք.ա. 520թ.
2) Ք.ա. 521թ. 4) Ք.ա. 529թ.

2. Ե՞րբ է Հայաստանում զահ բարձրացել Հռոմի դրածո Տիգրան VI-ը.
1) 58թ. 2) 60թ. 3) 59թ. 4) 65թ.

3. Ե՞րբ է թագավոր հռչակվել Անտիոքոս I Երվանդունին.
1) Ք.ա. 93թ. 3) Ք.ա. 84թ.
2) Ք.ա. 70թ. 4) Ք.ա. 71թ.

4. Ո՞ր թվականին Արգիշտի I-ի զորքերը հասան մինչև Պարսուա և Բաբելոնի երկիր.

1) Ք.ա. 784թ. 3) Ք.ա. 782թ.
2) Ք.ա. 781թ. 4) Ք.ա. 779թ.

5. Ե՞րբ են բյուզանդացիները ներխուժել Կիլիկիա և պաշարել Մսիս քաղաքը.
1) 1132թ. 2) 1135թ. 3) 1145թ. 4) 1152թ.

6. Ո՞ր դարերի իրադարձությունների կապակցությամբ է խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվում Հայասա երկիրը.
1) Ք.ա. XVII □ XV դարերի 3) Ք.ա. XIII □ XI դարերի
2) Ք.ա. XV □ XIII դարերի 4) Ք.ա. XIV □ X դարերի

7. Ե՞րբ է Արշակ Արշակունին կազմակերպել դավադրություն Հուստինիանոս I-ի դեմ.
1) 539թ. 2) 536թ. 3) 540թ. 4) 548թ.

8. Ե՞րբ է ստեղծվել Նոր Ջուղայի հայկական տպարանը.
1) 1568թ. 2) 1618թ. 3) 1638թ. 4) 1616թ.

9. Ո՞ր թվականից է Հայաստանում երկրորդ անգամ գահակալել Սոհեմոս-Տիգրանը.
1) 163թ. 2) 185թ. 3) 161թ. 4) 164թ.

10. Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում ,Նաիրիե երկրանունը.
1) Ք.ա. XIV դարում 3) Ք.ա. XII դարում
2) Ք.ա. XIII դարում 4) Ք.ա. XI դարում

11. Ո՞վ էր հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները.
1) Երվանդ I 3) Արշամ
2) Երվանդ II 4) Շամ (Սամոս)

12. Ի՞նչ էր խոստացել Վահրամ Չուբինը Մուշեղ Մամիկոնյանին ռազմական օգնության դիմաց.
1) նրան հանձնել սպարապետի պաշտոնը
2) նրան հանձնել մարզպանի պաշտոնը
3) վերականգնել հայոց թագավորությունը
4) միավորել երկու մասի բաժանված Հայաստանը

13. Ո՞ր բերդն էր Զավախքի Զաքարյան իշխանության կենտրոնը.
1) Գագը 3) Ամբերդը
2) Բջնին 4) Թմուկը

14. Լևոն V-ին հաջորդեց նրա հորաքրոջ որդի՝
1) Կոստանդին Նղրեցին 3) Գվիդոն Լուսինյանը
2) Բոհեմունդ Լուսինյանը 4) Պաղտին Մարաջախտը

15. Ո՞վ է գլխավորել հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքներն իրականացնող Ազգային բյուրոյի գործադիր մարմինը.
1) Ռոստոմը 3) Հովսեփ Արղությանը
2) Արմեն Գարոն 4) Սիմոն Վրացյանը

16. Ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը.
1) Երևանի և Նախիջևանի զորահրամանատար
2) Արարատյան երկրի քալանթար

3) Երևանի խանության գլխավոր հարկահավաք
4) Նախիջևանի խանության կառավարիչ

17. Հայոց ո՞ր արքայի կառուցած քաղաքի մասին է պատմիչի խոսքը.

,Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ:

1) Վաղարշ I-ի
2) Արտաշես I-ի
3) Երվանդ IV-ի
4) Տիգրան Մեծ-ի

18. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

,Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին:

1) Թովմա Արծրունի
2) Հովհաննես Դրասխանակերտցի
3) Ասողիկ
4) Վարդան Արևելցի

19. Ըստ ավանդության՝ ո՞ր տարածքի անվանումն էր կապված Աստղիկ աստվածուհու հետ.

1) Մշո դաշտ
2) Արարատյան դաշտ
3) Եփրատի հովիտ
4) Բագառիճ ավան

20. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) նախահայրենիք
2) պարգևականք
3) գանձագին
4) գունդստաբլ
5) հայրենիք
6) աթաբեկ
7) սեպուհ
8) ամիրսպասալար

ա. առուվաճառքի ենթակա մասնավոր հողեր
բ. հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողեր
գ. նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների կազմած մեծ ընտանիքների զբաղեցրած տարածքներ
դ. բանակի ընդհանուր հրամանատար Կիլիկյան Հայաստանում
ե. պայմանական հողատիրության կալվածք
զ. իշխանական տան կրտսեր ներկայացուցիչ
է. զորքերի գլխավոր հրամանատար վրացական արքունիքում
ը. արքունական հեծելազորի հրամանատար Կիլիկյան Հայաստանում
թ. թագաժառանգի խնամակալ վրացական արքունիքում

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ը, 5-ե, 6-է, 7-զ, 8-դ
2) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-զ, 6-թ, 7-է, 8-ը
3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-թ, 7-զ, 8-է
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ, 6-թ, 7-զ, 8-է

21. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

ա. 1877թ. ամռանը թուրքերը մեծ ուժեր կենտրոնացնելով, պաշարում են Բայազետի բերդը, և ավելի քան 23 հազար հոգուց բաղկացած թուրքական զորքերը կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում:
բ. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս-Մելիքովի հրամանատարությամբ գործող 52-հազարանոց Կովկասյան կորպուսն էր:

գ. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմում Մ.Լոռիս-Մելիքովի և Ա.Տեր-Ղուկասովի կողքին մարտնչում էին գեներալներ Հովհաննես Լազարևը, Բեհբութ Շելկովնիկովը, Հակոբ Ալխազովը, Լևոն Մելիքովը, Ստեփան Քիշմիշևը և տարաստիճան բազմաթիվ զորահրամանատարներ և զինվորականներ:

դ. Մկրտիչ Խրիմյանի 1869թ. պատրիարք դառնալուց հետո ,Ազգային սահմանադրությունը գործադրվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:

ե. XIX դարի կեսերին Զեյթունն անվանապես էր ենթարկվում Մարաշի փաշայությանը, սակայն միայն իշխանություններին տարեկան որոշ քանակությամբ հարկ էր վճարում:

զ. 1860թ. մայիսի 24-ին սուլթանի կողմից վավերացված արևմտահայերի ,Ազգային սահմանադրությունը Արևմտյան Հայաստանի ու ամբողջ կայսրության հայ բնակչության կրթամշակութային կյանքը կարգավորող իրավական կարևոր փաստաթուղթ էր:

է. Ըմբոստ Զեյթուն լեռնագավառը իրեն ենթարկելու թուրքական կառավարության ջանքերն ավելի եռանդուն են դարձել, երբ Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվել են Մարաշի շրջակայքում:

ը. 1860թ. չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ թուրքական 50-հազարանոց բանակը արշավել է Զեյթունի վրա և ջախջախիչ պարտություն կրել:

թ. 1862թ. Ազիզ փաշայի կազմակերպած գրոհը Զեյթունի վրա ավարտվել է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմել:

1) գ, թ, ե 2) ա, զ, թ 3) ա, զ, ը 4) բ, դ, է

22. Տրված պնդումներից որո՞նք են 1914թ. ռուս-թուրքական համաձայնագրի պայմաններից.

ա. Յոթ նահանգներից ձևավորվում էին երկու վարչական միավոր՝ Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր կազմով:

բ. Դրանք կառավարվելու էին երկու օտարերկրյա ընդհանուր տեսուչների կողմից:

գ. Տեսուչներն իրավունք էին ստանում նշանակելու և պաշտոնանկ անելու ապաշնորհ կամ օրինազանց պաշտոնյաներին:

դ. Հողային հարցերը պետք է վճռեին սուլթանի կազմած խորհուրդները:

ե. Վերացվում էին համիդիե գնդերը:

1) գ, դ, ե 2) բ, գ, դ 3) ա, բ, գ 4) ա, դ,ե

23. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ

բ. հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում

գ. Ներսեհ Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը

դ. Տրդատ II-ի թագ ստանալը կայսր Մակրինոսից

ե. հայ-հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում

զ. Խոսրով II-ի գահակալության սկիզբը

1) դ, զ, գ, ա, ե, բ 3) դ, զ, ա, ե, գ, բ
2) դ, զ, ա, գ, ե, բ 4) զ, դ, ա, գ, ե, բ

24. Ե՞րբ է տեղի ունեցել Օշականի Ցլու գլուխ լեռան ճակատամարտը.

1) 334թ. 2) 337թ. 3) 336թ. 4) 338թ.

25. Պատմական գործիչների անունները դասավորել ըստ գործունեության հաջորդականության.

ա) Տրդատ II
բ) Թեոդորոս Ռշտունի
գ) Տիգրան Մեծ
դ) Վահրամ Պահլավունի
ե) Արտավազդ II
զ) Երվանդ IV Վերջին
է) Արշակ II
ը) Արտաշես I
թ) Արտավազդ I
ժ) Հովհաննես Ա Մանդակունի

1) զ, ը, բ, գ, ե, ա, ժ, դ, թ, է
2) ա, ը, թ, դ, ե, զ, է, ժ, բ, գ
3) զ, ը, թ, գ, ե, ա, է, ժ, բ, դ
4) թ, գ, դ, ա, ը, է, բ, ե, ժ, զ

26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Անավարզայի դառնալը Կիլիկիայի հայկական իշխանության մայրաքաղաք
բ. Թորոս II-ի կողմից Անավարզա, Մսիս, Վահկա, Տարսոն քաղաքների գրավումը բյուզանդացիներից
գ. Հովհաննես Կոմնենոս կայսեր կողմից Անավարզայի գրավումը
դ. Լևոն I իշխանի գերեվարությունը
ե. Վահկա բերդի հերոսական դիմադրությունը Հովհաննես Կոմնենոսի բանակին
զ. Լևոն I իշխանի կողմից Տարսոն, Մսիս և Ադանա քաղաքների գրավումը
է. Թորոս I-ի կողմից Սիս և Անավարզա քաղաքների գրավումը
ը. Հովհաննես Կոմնենոս կայսեր գլխավորած բյուզանդական բանակի ներխուժումը Դաշտային Կիլիկիա
թ. Լևոն I-ի որդի Թորոսի փախուստը բյուզանդական գերությունից
ժ. Բերդուսի ճակատամարտը

1) է, ա, ժ, զ, ը, գ, ե, դ, թ, բ
2) ժ, զ, ը, ե, գ, է, ա, դ, բ, թ
3) զ, ա, ժ, ը, է, ե, գ, դ, բ, թ
4) է, ժ, ա, զ, գ, ե, ը, թ, բ, դ

27. Անվանումները համապատասխանեցնել նահապետների անուններին.

ա. Արամ
բ. Արամանյակ
գ. Արամայիս
դ. Երաստ

1. Արմավիր
2. Արմենիա, արմեն
3. Երասխ (Արաքս)
4. Արարատ
5. Արագած, Արագածոտն

1) 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ
2) 1-բ, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 5-բ
4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

28. Արտաշես I-ի ստեղծած չորս զորավարությունների ղեկավարների անունները համապատասխանեցնել զորավարության ուղղությանը.

1) արևելք
2) հարավ
3) հյուսիս
4) արևմուտք

ա. Արտաշեսի որդի Զարեհ
բ. Արտաշեսի զորավար Զարեհ
գ. Արտաշեսի որդի Տիրան
դ. Արտաշեսի որդի Արտավազդ
ե. զորավար Սմբատ

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ
2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե

29. Ո՞ր շարքի բոլոր նախարարներն են Ավարայրի ճակատամարտում եղել զորագնդերի հրամանատարներ.

1) Վարդան Մամիկոնյան, Թաթուլ Վանանդեցի, Խորեն Խորխոռունի, Ներշապուհ Արծրունի

2) Վարդան Մամիկոնյան, Գաղիշո Խորխոռունի, Ներշապուհ Արծրունի, Արշավիր Արշարունի
3) Վարդան Մամիկոնյան, Մերուժան Արծրունի, Թաթուլ Վանանդեցի, Խորեն Խորխոռունի
4) Վարդան Մամիկոնյան, Խորեն Խորխոռունի, Մերուժան Արծրունի, Համազասպ Մամիկոնյան

30. Ե՞րբ է Համազասպի ջոկատը գրավել Խիզանը.
1) 1916թ. հունվարի 13-ին
2) 1916թ. փետրվարի 2-ին
3) 1916թ. մարտի 11-ին
4) 1916թ. մայիսի 15-ին

31. Ե՞րբ է Ալեքսանդրապոլում տեղի ունեցել հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը.
1) 1918թ. ապրիլին
2) 1918թ. նոյեմբերին
3) 1918թ. հոկտեմբերին
4) 1918թ. հունվարին

32. Ո՞վ է 1893-1917թթ. ընթացքում պեղումներ իրականացրել Անիում.
1) Հ.Աճառյանը
2) Ն.Մառը
3) Հ.Օրբելին
4) Գ.Ղափանցյանը

33. Ե՞րբ է ընդունվել ԽՍՀՄ կառավարության որոշումը խորհրդա□թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին.
1) 1947 թ. ապրիլի 30□ին
2) 1947 թ. մայիսի 4□ին
3) 1945 թ. մարտի 19□ին
4) 1945 թ. հուլիսի 19□ին

34. 1991թ. փետրվարին ընդունված օրենքի արդյունքում՝
1) ՀՀ-ում ստեղծվեց բազմակուսակցական համակարգ
2) կասեցվեց դաշնակցության գործունեությունը Հայաստանում
3) ձևավորվեց ,Հանրապետությունե քաղաքական միավորումը
4) սկսվեցին ընդդիմության առաջնորդների ձերբակալությունները

35. ՀՀ ընդդիմադիր ուժերի միավորման հետևանքով 2008թ. օգոստոսին ձևավորվեց՝
1) ՀԱԿ-ը
2) ՀՀԿ-ն
3) ԲՀԿ-ն
4) ՄԱԿ-ը

36. Ո՞վ է հայ առաջին պարբերականի հիմնադիրը.
1) Հակոբ Մեղապարտը
2) Գրիգոր Արծրունին
3) Հարություն Շմավոնյանը
4) Մխիթար Սեբաստացին

37. Որքա՞ն հայ բնակչություն կար Կիլիկիայում 1920 թ. սկզբներին.
1) 50 հազար
2) 150 հազար
3) 200 հազար
4) 100 հազար

38. Ե՞րբ է տեղի ունեցել ստորև նկարագրված ճակատամարտը.
,Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին:
Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց:

1) Ք.ա. 69թ. հոկտեմբերի 6-ին
2) Ք.ա. 31թ. սեպտեմբերի 2-ին
3) Ք.ա. 53թ. մայիսի 6-ին
4) Ք.ա. 68թ. սեպտեմբերի 22-ին

39. Թվարկվածներից ո՞ր մարմնի նիստում են ասվել ստորև բերված խոսքերը.
,Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար:

1) Հայոց ազգային խորհրդի
2) Երևանի ազգային խորհրդի
3) Բաքվի ազգային խորհրդի
4) Արևմտահայ ազգային խորհրդի

40. Թվարկվածներից ո՞րը ,յոթ ազատ արվեստներիե համակարգի Եռյակ ենթահամակարգից չէ.
1) տրամաբանություն
2) երաժշտություն
3) ճարտասանություն
4) քերականություն

41. Ինչո՞ւ խորհրդային երկրում արագացվեցին կոլեկտիվացման տեմպերը, և բռնություն ու հարկադրանք գործադրվեց գյուղացիների հանդեպ.
ա. Կոմունիստական կուսակցությունը 1927-1928 թթ. գյուղատնտեսական դժվարություններից ելքը տեսավ կոլեկտիվացման տեմպերի արագացման մեջ:
բ. Գործադրվեց բռնություն, որովհետև մենատնտես գյուղացիները ժողովրդի թշնամիներ էին և սոցիալիզմի կառուցման հակառակորդներ:
գ. Գործադրվեց բռնություն, որովհետև մենատնտես գյուղացին ցանկություն չուներ և պատրաստ չէր հրաժարվելու անհատական տնտեսությունից ու կամավոր մտնելու կոլտնտեսություն:
դ. Գործադրվեց բռնություն, որովհետև միջակ գյուղացիները թույլ չէին տալիս չքավոր գյուղացիներին անդամագրվել կոլեկտիվ տնտեսություններին:

1) ա, բ
2) գ, դ
3) ա, գ
4) բ, դ

42. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա. Գող Վասիլի իշխանության վերացումը
բ. Փիլարտոս Վարաժնունու իշխանության վերացումը
գ. Գող Վասիլի իշխանության հիմնադրումը
դ. Փիլարտոս Վարաժնունու իշխանության հիմնադրումը
ե. Բերդուսի ճակատամարտը

1) դ, ե, գ, բ, ա
2) դ, գ, բ, ե, ա
3) գ, դ, ե, ա, բ
4) դ, գ, ե, բ, ա

43. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա. բոլշևիկների կազմակերպած հեղաշրջումը Պետրոգրադում
բ. Անդրկովկասյան սեյմի լուծարումը
գ. հայկական զորքերի կողմից Սարդարապատի հետգրավումը
դ. ,Թուրքահայաստանե տերմինի առաջին օգտագործումը պաշտոնական փաստաթղթերում

ե. Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը

1) դ, ա, ե, գ, բ
2) բ, դ, ա, ե, գ
3) ա, ե, դ, գ, բ
4) դ, բ, ա, գ, ե

44. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական զորքերի հեռանալն Ալեքսանդրապոլից
բ. Հայհեղկոմի դեկրետը Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին համաներում շնորհելու մասին
գ. Պարենհարկի կիրառման մասին որոշման ընդունումը
դ. Հայհեղկոմի վերակազմավորվելը ՀՍԽՀ Ժողկոմխորհի
ե. Փետրվարյան ապստամբության ժամանակ Կարմիր բանակի զորքերի կողմից Երևան մտնելը

1) ա, բ, ե, դ, գ
2) բ, ա, ե, դ, գ
3) ե, գ, բ, ա, դ
4) ե, ա, բ, դ, գ

45. Կատարել համապատասխանեցում.

Հիմնադրման վայր	***Կրթական հաստատություն***
1. Վենետիկ	ա. Ռափայելյան դպրոց
2. Զմյուռնիա	բ. Մեսրոպյան դպրոց
3. Կ. Պոլիս	գ. Մարդասիրաց ճեմարան
4. Կալկաթա	դ. Կարապետյան դպրոց
	ե. Սկյուտարի դպրոց

1) 1□ա, 2□ե, 3□գ, 4□դ
2) 1□դ, 2□գ, 3□ա, 4□բ
3) 1□ա, 2□բ, 3□ե, 4□գ
4) 1□գ, 2□ա, 3□բ, 4□դ

46. Կատարել համապատասխանեցում.

Անուն	***Պաշտոն***
1. Գագիկ Հարությունյան	ա. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
2. Վազգեն Մանուկյան	բ. ՀՀ Ազգային ժողովի նախագահ
3. Արթուր Մկրտչյան	գ. ՀՀ փոխնախագահ
4. Սերժ Սարգսյան	դ. ԱԺՄ նախագահ
5. Կարեն Դեմիրճյան	ե. ՀՀ երրորդ նախագահ
	զ. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ

1) 1□զ, 2□զ, 3□դ, 4□ե, 5□ա
2) 1□դ, 2□զ, 3□ա, 4□զ, 5□բ
3) 1□զ, 2□դ, 3□զ, 4□ե, 5□բ
4) 1□բ, 2□ե, 3□զ, 4□դ, 5□ա

47. Հասկացությունը համապատասխանեցնել իր բացատրությանը.

1. Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարը
2. զինվորական աստիճան Կիլիկիայում, որը ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարությունից, նետաձգությունից, նիզակի և սրի գործածությունից և այլ անհրաժեշտ գիտելիքներից և հմտություններից
3. արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում
4. կիլիկյան բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարը
5. պատերազմի ժամանակ կանոնավոր բանակին օգնելու նպատակով գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրված զորք

ա. մարաջախտ
բ. սպասալար
գ. աշխարհազոր
դ. կապիտան
ե. ասպետ (ձիավոր)
զ. գունդստաբլ

1) 1□զ, 2□ե, 3□բ, 4□ա, 5□գ
2) 1□զ, 2□դ, 3□ա, 4□բ, 5□գ
3) 1□գ, 2□ե, 3□դ, 4□բ, 5□զ
4) 1□գ, 2□դ, 3□բ, 4□ա, 5□ե

48. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Զանգեզուր□Ղարաբաղի մարզային խորհուրդ
2. Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
3. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
4. Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
5. ,Լոռու չեզոք գոտիե

ա. Թիֆլիսի կոնֆերանսի որոշմամբ ստեղծված վարչական միավոր, ուր սահմանվել էր հատուկ կառավարում՝ հայ և վրացի ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ□նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ
բ. արցախահայության I համագումարում ստեղծված երկրամասի իշխանության մարմին
գ. Զանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա վերակազմված և Հայաստանի Հանրապետության անունից գործող մարմին
դ. ԼՂԻՄ□ի լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմին, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը
ե. Լոռու և Ախալքալաքի գավառներից ստեղծված վարչական միավոր, որը գտնվում էր անգլիացիների վերահսկողության ներքո
զ. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին

1) 1□ե , 2□բ, 3□դ, 4□զ, 5□ա
2) 1□զ, 2□բ, 3□զ, 4□դ, 5□ե
3) 1□զ, 2□բ, 3□դ, 4□զ, 5□ա
4) 1□զ, 2□զ, 3□բ, 4□դ, 5□ե

49. Հասկացությունը համապատասխանեցնել բովանդակությանը.

1) Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե
2) Հայկական ազգային կոմիտե
3) Հատուկ կառավարման կոմիտե
4) Հայաստանի օգնության կոմիտե
5) Հայրենիքի փրկության կոմիտե

ա. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին
բ. Արևմտահայերի առաջին համագումարում ստեղծված մարմին
գ. ԱՄՆ-ում դաշնակցության կողմից ստեղծված Հայ դատի հանձնախումբ՝ հայոց պահանջատիրության պաշտպանության նպատակով
դ. Հայաստանի կառավարությանն առընթեր կազմավորված մարմին՝ սփյուռքահայերի ներգաղթն իրականացնելու նպատակով
ե. Խորհրդային Հայաստանին արտաքին օգնության նպատակով 1921թ. ստեղծված մարմին
զ. Փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանում ստեղծված իշխանության մարմին

1) 1-ե, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ա
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-զ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-զ
4) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-ա

50. Գործիչների անունները համապատասխանեցնել մեջբերված խոսքերին.

1) ,Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության պայմանը:
2) ,Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների ...ե:
3) ,Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման վրաե:
4) ,... Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն ...ե:

ա. Յակով Զարոբյան
բ. Ասքանազ Մռավյան
գ. Գրիգոր Հարությունյան
դ. Նիկոլ Աղբալյան
ե. Հենրիխ Պողոսյան

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ

51. Որքա՞ն էր հայ կամավորականների թիվը 1915թ. վերջին □ 1916թ. սկզբին.

1) 5 հազար
2) 15 հազար
3) 20 հազար
4) 10 հազար

52. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ Էջմիածնի գաղտնի ժողովի գումարումը
բ. Դավիթ բեկի գլխավորությամբ հայկական իշխանության ստեղծումը
գ. Անգեղակոթի ժողովի գումարումը
դ. Խամսայի մելիքությունների ինքնավարության ստեղծումը
ե. Իսրայել Օրու ուղևորությունը Պարսկաստան

1) ե, գ, ա, դ, բ
2) ա, գ, ե, բ, դ
3) բ, ե, դ, գ, ա
4) ա, գ, ե, դ, բ

53. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Ադրիանապոլսի պայմանագրի կնքումը
բ. Գեորգիևսկյան դաշնագրի կնքումը
գ. Հայկական մարզի ստեղծումը

դ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
ե. Արևելյան Վրաստանի բռնակցումը Ռուսաստանին
զ. Հայոց եկեղեցու կանոնադրության հրապարակումը
է. Գյուլիստանի պայմանագրի կնքումը
ը. Երևանի նահանգի հիմնումը
թ. Բուխարեստի պայմանագրի կնքումը
ժ. Իսրայել Օրու ժամանումը Ռուսաստան

1) թ, է, ե, զ, ա, ժ, ը, զ, դ, բ
2) բ, դ, զ, ը, ժ, ա, զ, ե, է, թ
3) ժ, բ, ե, թ, է, դ, զ, ա, զ, ը
4) ժ, ե, զ, դ, ա, զ, բ, թ, ը, է

54. Ո՞ւմ առաջարկած բանաձևն է ընկած ,Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասինե կոնվենցիայի հիմքում.

1) Դեյվիդ Լլոյդ Ջորջ
2) Առնոլդ Թոյնբի
3) Ջեյմս Բրայս
4) Ռաֆայել Լեմկին

55. Կատարել համապատասխանեցում.

Նշանավոր ներկայացուցիչներ

1) Էդվարդ Միրզոյան
2) Նիկողայոս Բունիաթյան
3) Գևորգ Ջահուկյան
4) Դավիթ Մալյան
5) Արմենակ Մնջոյան
6) Շարա Տալյան

Մասնագիտություն

ա. քիմիկոս
բ. կոմպոզիտոր
գ. երգիչ
դ. ճարտարապետ
ե. երկրաբան
զ. լեզվաբան
է. դերասան

1) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-զ, 6-գ
2) 1-ե, 2-բ, 3-զ, 4-է, 5-գ, 6-դ
3) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-է, 6-դ
4) 1-բ, 2-դ, 3-զ, 4-է, 5-ա, 6-գ

56. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում տեղ գտած Հայաստանին վերաբերող հոդվածները համապատասխանեցնել բովանդակությանը.

1) 16-րդ
2) 25-րդ
3) 27-րդ
4) 61-րդ

ա. Ռուսական զորքերին իրավունք էր տրվում 6 ամիս ժամկետով մնալու Հայաստանում:
բ. Թուրքական կառավարությունը պարտավորվում է չիալածել պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին:
գ. Բարձր դուռը պարտավորվում է Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված և կրկին Թուրքիային վերադարձվելիք գավառներում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից:
դ. Ղրիմը վերադարձնելու նպատակով Ռուսաստանը կրկին անգամ հրաժարվում է Արևմտյան Հայաստանում գրաված հողերից:
ե. Բարեփոխումների իրագործման հսկողությունը, բացի Ռուսաստանից, դրվում էր նաև վեհաժողովին մասնակից 5 պետությունների վրա:

1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե
3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

57. Կատարել համապատասխանեցում.

Իրադարձություն

1) Հայաստանի անկախության վերաբերյալ Հայոց ազգային խորհրդի կոչի հրապարակումը
2) Բաթումի հայ-թուրքական բանակցությունները
3) ՀՀ բանակի կազմավորումը
4) Մայիսյան ապստամբությունը բոլշևիկների կողմից
5) Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհրդի ստեղծումը
6) Հայաստանի խորհրդի նախագահ ընտրվելը

Անուն

ա. Արսեն Ծահմազյան
բ. Բարսեղ Կանայյան
գ. Ավետիք Սահակյան
դ. Թովմաս Նազարբեկյան
ե. Նիկոլ Աղբալյան
զ. Ստեփան Ալավերդյան
է. Ալեքսանդր Խատիսյան

1) 1-ե, 2-է, 3-դ, 4-զ, 5-ա, 6-գ
2) 1-ե, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ա, 6-է
3) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-ե, 6-դ
4) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա, 6-զ

58. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

1) 1920թ. օգոստոսի 10
2) 1918թ. հունիսի 4
3) 1920թ. մայիսի 30
4) 1918թ. մարտի 3
5) 1920թ. օգոստոսի 24
6) 1921թ. հոկտեմբերի 20

Պայմանագիր կամ համաձայնագիր

ա. Հայ-վրացական զինադադարի
բ. Անկարայի ֆրանս-թուրքական հաշտության
գ. Մոսկվայում նախաստորագրված ռուս-թուրքական ,Սրտագին և անկեղծ բարեկամությանե
դ. Սևրի խաղաղության
ե. Անկարայի ֆրանս-թուրքական զինադադարի
զ. Բրեստ-Լիտովսկի հաշտության
է. Բաթումի հաշտության

1) 1-դ, 2-է, 3-ե, 4-զ, 5-գ, 6-բ
2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-դ, 6-բ
3) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-գ, 6-ե
4) 1-դ, 2-է, 3-բ, 4-զ, 5-գ, 6-ե

59. Պաշտոնները համապատասխանեցնել գործիչների անուններին.

1) Սերգեյ Կիրով
2) Ներսիկ Ստեփանյան
3) Լավրենտի Բերիա
4) Սահակ Տեր-Գաբրիելյան
5) Գրիգոր Հարությունյան

ա. Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն
բ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
գ. Հայաստանի ներքին գործերի ժողկոմ
դ. Անդրկովկասի կուսակցական երկրային կոմիտեի առաջին քարտուղար
ե. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ
զ. Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղար

1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-զ, 5-գ,
2) 1-զ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-բ
3) 1-գ, 2-զ, 3-ե, 4-բ, 5-ա
4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

60. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.

1) 1929թ. նոյեմբեր
2) 1934թ. դեկտեմբեր
3) 1936թ. հուլիս
4) 1938թ. ապրիլ
5) 1924թ. փետրվար

ա. Հայաստանի գրողների միության ստեղծումը
բ. կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանի եղերական մահը
գ. Ստալինի ,Մեծ բեկման տարին՝ հոդվածի հրապարակումը
դ. Ա.Խանջյանի սպանությունը
ե. Ս.Կիրովի սպանությունը
զ. Դաշնակցության երիտասարդական միության ինքնավերացման համագումարը

1) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-զ
2) 1-ե, 2-զ, 3-բ, 4-դ, 5-ա
3) 1-զ, 2-դ, 3-զ, 4-ա, 5-բ
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-ա

Բ խմբի առաջադրանքներ

61. Ընտրել սխալ պնդումները.

1) Ֆիդայական շարժումը դրսից՝ Այսրկովկասից ներմուծված խորթ երևույթ էր, և դրա համար Օսմանյան կայսրությունում նախադրյալներ չկային:
2) Հայդուկային պայքարի մարտավարության կողմնակիցներ Անդրանիկը, Գևորգ Չավուշն ու նրանց համախոհները փորձում էին պարտիզանական ու վրեժխնդրական ձեռնարկներով կանխել բռնությունները, ոգևորել ժողովրդին և նրան դուրս բերել հուսահատական վիճակից:
3) Ֆիդայական շարժումը լայն թափ ստացավ հատկապես XX դարի սկզբներին, երբ դուրս եկավ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության ազդեցությունից և հսկողությունից ու դարձավ ավելի անկաշկանդ:
4) 1904թ. Սասունի ինքնապաշտպանությունից հետո ազատագրական պայքարի ղեկավարները Մշո դաշտի հայությանը չվտանգելու մտահոգությամբ վերջ տվեցին պարտիզանական գործողություններին և հայդուկներին հանեցին Տարոնից:
5) Ազատագրական պայքարի ղեկավարները 1904թ. որոշեցին կազմակերպական աշխատանքները շարունակելու նպատակով Գևորգ Չավուշին մի փոքր խմբով հետ ուղարկել Մուշ և Սասուն:
6) Գևորգ Չավուշը մի շարք, հատկապես Բաբշենի կռվում տարած հաղթանակների շնորհիվ դարձել էր հայ ժողովրդի ազատարարի խորհրդանիշ:
7) Սասունի 1904թ. հերոսական ինքնապաշտպանությունն ավարտվեց պարտությամբ: Այն ցույց տվեց, որ մասնակի ընդհարումներով հնարավոր չէ լուծել արևմտահայության խնդիրը:

62. ,Հռչակագիր Հայաստանի անկախության մասինե պատմական փաստաթղթին վերաբերող պնդումներից որո՞նք են սխալ.

1) Հատուկ հոդվածով ընդունվում էր Հայաստանի Հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ օրենքը հաստատվում էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից, ապա այն գործելու էր հանրապետությունում:
2) Հռչակագրի մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի՝ իբրև պետական լեզվի կիրառման հիմնահարցին. հանրապետությունում ամբողջ գործավարությունը կատարվելու էր հայերենով և ռուսերենով:
3) 22 հոդվածից բաղկացած այդ հիմնարար փաստաթուղթը նախանշում էր Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացման ուղիները:
4) Վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու ոտնահարված իրավունքները:

5) Հայաստանի բանակը պետք է ունենար իր խաղարարար առաքելությունները բոլոր երկրներում:
6) Հռչակագիրը հաստատում էր ՀՀ վճռականությունն Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:
7) Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի սպառազինությունից, պիտի հասնի սեփական դրամական միջոցների ստեղծմանը:

63. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

1) 3-րդ հանրապետության առաջին տարիներին սփյուռքահայ հանրահայտ երաժիշտներից Արամ Ղարաբեկյանը ստանձնեց Հյաստանի օպերայի և բալետի պետական թատրոնի ղեկավարությունը:
2) 1967թ. Հայաստանում գործում էր 112 գիտահետազոտական հիմնարկ՝ 20 հազար գիտաշխատողներով:
3) 1950-ական թվականների կեսերից Հայաստանում մեծ զարգացում են ստացել մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքները, իսկ այդ ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված են ակադեմիկոսներ Արտաշես Շահինյանի, Տիգրան Զրբաշյանի և Սերգեյ Մերկուրովի անունների հետ:
4) 1950-ական թթ. հայկական արվեստի վերելքը պայմանավորվեց նաև 1945թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով, ասպարեզ մտավ նոր սերունդ, որը ձգտում էր նորովի արտահայտելու հասարակությանը հուզող խնդիրները:
5) 1991 թ. դիրիժոր և կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանը հիմնեց Գյումրիի մշակութային կենտրոնը:
6) 1940-1950-ական թվականներին կառուցվել են պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ, որոնցից են Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը Ապարանում, ,Մայր Հայաստանե հուշարձանը Լենինականում (այժմ՝ Գյումրի) և այլն:
7) 1950-1970-ական թթ. հայկական գեղանկարչության ամենաբնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը:

64. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

1) Կարսի մարզի մեջ մտած գավառները կոչվում էին նաև օկրուգներ:
2) Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը Օսմանյան կայսրության հիմնական օրենքն էր՝ սահմանադրությունը:
3) Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
4) Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ պայքարելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր ,Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե:
5) Արևմտահայերի Ազգային սահմանադրության համաձայն ստեղծվող Ազգային ժողովի անդամները կոչվում էին երեսփոխաններ:
6) Անդրկովկասում Գ.Գոլիցինի փոխարեն նշանակված Ի.Վորոնցով-Դաշկովի պաշտոնը կոչվում էր Կովկասի կառավարչապետ:
7) Սասունում սուլթան Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածներից հետո մեծ տերությունների կազմած բարենորոգումների նախագիծը ստացավ ,Մայիսյան բարենորոգումների ծրագիրե անունը:

65. Ընտրել ճիշտ պնդումները.

1) Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղել էին նաև 1930-ական թթ.:

2) Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության ընձեռած ազատության պայմաններում Արցախի բնակչությունը սկսեց ավելի համարձակ պայքարել ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու համար:
3) Առաջին հնգամյակի տարիներին Հայաստանում շահագործման հանձնվեց 18, իսկ երկրորդ հնգամյակի տարիներին՝ 26 արդյունաբերական ձեռնարկություն:
4) Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառեց հարկերի ավելացման քաղաքականությունը:
5) Կերչի մոտ մղված մարտերից հետո 390-րդ հայկական դիվիզիան մասնակցեց նաև Բեռլինի գրավման օպերացիային:
6) Սփյուռքում կարևոր դերակատարում ունեին հայ ավանդական կուսակցությունները, որոնց գործունեության առաջնային թիրախները Հայկական հարցի լուծումը և ցեղասպանության միջազգային ճանաչումն էին:
7) Մինչև նոր սահմանադրության ընդունումը ՀՀ-ում շարունակում էին գործել ՀԽՍՀ Սահմանադրության այն դրույթները, որոնք նույնիսկ հակասում էին Անկախության հռչակագրի հիման վրա ստեղծված օրենքներին:

66. Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

1) Արդյունաբերացնել Խորհրդային Հայաստանը նշանակում էր ստեղծել արդյունաբերական նոր ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, հիդրոէլեկտրակայաններ, ընդլայնել երկաթուղիները:
2) Հայաստանում 1920-ական թթ. չկային Լ.Տրոցկու տեսակետների պաշտպաններ:
3) 1932թ. սկզբին Հայաստանում առանց դատաքննության և դատական վճիռների գնդակահարվեց շուրջ 500 մարդ, տարբեր ժամկետների ազատազրկման ենթարկվեց շուրջ 1500 մարդ:
4) 1937թ. հուլիսին Բերիայի հրամանով Թիֆլիսում սպանվեց Աղասի Խանջյանը:
5) Պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում խորհրդային իշխանությունները օգտագործում էին ,Ազատ եկեղեցական եղբայրությունե կազմակերպությունը:
6) ՀԿ(բ)Կ կենտկոմը 1938թ. օգոստոսի 4-ին որոշում ընդունեց Էջմիածնի վանքը փակելու մասին, Մոսկվան հաստատեց այդ որոշումը:
7) 261-րդ հրաձգային դիվիզիայի հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը:
8) Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը օդաչու Նելսոն Ստեփանյանն էր:

67. Գտնել սխալ պնդումները.

1) Երբ Մարկոս Կրասոսը ժամանեց Ասորիք, Արտավազդ II-ը եկավ նրա մոտ և առաջարկեց պարթևների դեմ արշավանքը սկսել Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով:
2) Արտաշատի պայմանագրի կնքումից հետո պարթևները հետ ստացան Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը:
3) Հռոմեական զորավար Կորբուլոնը, գրավելով Արտաշատ մայրաքաղաքը, հրամայեց քանդել այն:
4) Տիգրան III-ը Հռոմի ցանկությամբ հայոց գահը կտակեց իր որդի Տիգրան IV-ին:
5) Միհրդատ Իբերացուց հայոց գահը բռնազավթել է նրա եղբորորդի Հռադամիզդը:
6) Սոհեմոս-Տիգրանին Հայաստանից վտարելուց հետո գահը հանձնվել է Խոսրով I-ին:
7) Տրդատ II-ին հաջորդած Արտավազդից հետո հայոց գահն անցել է Խոսրով II-ին:

68. Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

1) Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց ,Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը:
2) Մուդրոսի զինադադարից հետո Կիլիկիան զինագրավվեց ֆրանսիական զորքերի կողմից, իսկ 1919թ. նոյեմբերին նրանց փոխարինեցին անգլիական զորքերը:
3) Կապիտան Արսեն Շահմազյանը 1919թ. նոյեմբերին ժամանեց Գորիս և ստանձնեց Արցախի գեներալ-կոմիսարի պաշտոնը:
4) Արսեն Շահմազյանին գեներալ-կոմիսարի պաշտոնում փոխարինեց Սերգեյ Մելիք-Յոլչյանը:
5) Բաքվի 1918թ. ինքնապաշտպանության գործում մեծ դեր ունեցան գեներալ Նազարբեկյանը, Դրոն, Համազասպը, Գրիգորի Կորգանովը և ուրիշներ:
6) Այնթապի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր հոգևոր առաջնորդ Պետրոս Սարաճյանը:
7) Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում ամրապնդվեցին Անգլիայի դիրքերը:
8) 1921 թ. նոյեմբերի 21-ին հայկական ուժերն ազատագրեցին Գորիսը:
9) Կիլիկիայում 1920թ. սկզբներին ապրում էր 300 հազար հայ, սակայն տեղում հաստատված ֆրանսիական վարչությունը լուրջ քայլեր չձեռնարկեց հայերի անվտանգությունն ապահովելու համար:

69. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

1) 1932-1933թթ. ընթացքում սկսվեցին Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները, ինչի շնորհիվ շուտով Կապանում վերսկսվեց պղնձի ձուլումը:
2) 1989թ. հունվարի 11-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանեց՝ վարիչների մարմին, որի վրա էր դրվում մարզի պետական մարմինների ղեկավարությունը:
3) Հայոց համազգային շարժման առաջին համագումարը տեղի է ունեցել 1989թ. հոկտեմբերի 4-ին:
4) ՀՀ նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին 2008թ. փետրվարի 19-ին:
5) Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) ձևավորվեց 2008թ. փետրվարին:
6) 1991թ. փետրվարին խորհրդարանն ընդունեց օրենք, որով ՀՀ-ում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:

70. Տրվածներից ո՞ր երեք կետը Հայաստանի ազատագրության՝ Մովսես Սարաֆյանի կազմած ծրագրից չեն.

1. Հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկել Արցախի մելիքներին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք և զենք:
2. Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:
3. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
4. Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:
5. Ազատագրված Հայաստանում թագավոր պետք է հռչակվեր Արցախի մելիքներից մեկը:
6. Հայերից և վրացիներից կազմավորված զորաջոկատների հրամանատարը պետք է լիներ հայազգի և ենթարկվեր ռուսական հրամանատարությանը:
7. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին:

БЛАНК ОТВЕТОВ

ТЕСТ № 1

Ответы на вопросы группы А

A1	A2	A3	A4	A5	A6	A7	A8	A9	A10	A11	A12	A13	A14	A15	A16
3	2	2	2	4	2	4	3	4	2	4	3	4	3	3	2

A17	A18	A19	A20	A21	A22	A23	A24	A25	A26	A27	A28	A29	A30	A31	A32
4	3	1	4	3	3	2	3	3	1	3	1	1	3	1	2

A3	A3	A3	A3	A3	A3	A3	A4	A4	A4	A4	A4	A4	A4	A4	A4

3	4	5	6	7	8	9	0	1	2	3	4	5	6	7	8
3	1	1	3	2	4	2	2	3	2	1	4	3	3	1	3

A49	A50	A51	A52	A53	A54	A55	A56	A57	A58	A59	A60
3	4	4	2	3	4	4	2	1	1	4	1

Ответы на вопросы группы В

B61	B62	B63	B64	B65	B66	B67	B68	B69	B70
1	2	4	2	3	1	2	1	4	2
3	3	5	3	4	5	4	4	6	4
6	5	7	6	6	7	6	7	0	7